
**ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՁՅԱՆ, ԱՐՄԻՆԵ ԶԱՄԱՐՅԱՆ

Համավարակը և լայնածավալ պատերազմը խիստ բացասաբար ազդեցին ինչպես Հայաստանի Հանրապետության առողջապահական, այնպես էլ տնտեսական համակարգերի վրա: Նկատելիորեն կրճատվել են ֆիզիկական և իրավաբանական անձանց եկամուտները, ինչը, բնականաբար, հանգեցրել է գնողունակ պահանջարկի կրճատմանը և գործարար ներդրումների ծավալների նվազեցմանը: Ստեղծված իրավիճակում ՀՀ կառավարությունը մշակել և իրականացնում է համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման մի շարք ծրագրեր¹, որոնց հիմնական նպատակներն են տնտեսավարողների համար ապահովել ֆինանսական միջոցների մատչելիություն, գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարողների գործունեության խթանում, փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցություն, բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարողների առաջանցիկ զարգացման ապահովում, «գրոյից» բիզնես ստեղծելու մրցունակ ծրագրերի և ձեռնարկատիրական գաղափարների իրագործման խթանում: Թվարկվածներին մեծապես կնպաստեն նաև այն ծրագրերը, որոնք ուղղված են սոցիալապես անապահով ընտանիքների և կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսանողների ֆինանսական աջակցությանը:

Կորոնավիրուսի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերից հատկապես պետք է կարևորել հետևյալները.

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 1-ին միջոցառման² նպատակն է օժանդակել առանձին տնտեսավարողներին մեղմելու կորոնավիրուսի տարածման հետևանքով կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը: Նախատեսվում է տնտեսավարողների համար ստեղծել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող

¹ Տե՛ս Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրեր, <https://www.gov.am/am/covid19/>

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 1-ին միջոցառումը հաստատելու մասին», 26 մարտի 2020 թվական, № 355-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145869>

պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունը ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար: Միջոցառման շրջանակներում թիրախը որոշվում է վարկի նպատակով, շահառուներն են ռեզիդենտ տնտեսավարողները, որոնք ունեն վարկային և հարկային բարվոք պատմություն, օժանդակության ձևն է՝ տոկոսադրույքի սուբսիդավորումը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով վարկերի սուբսիդավորման չափերը՝ կախված նպատակից³

Վարկի նպատակը	Սուբսիդավորման չափը	
	Վարկեր դրամով	Վարկեր արտարժույթով
Աշխատակիցների	ամբողջությամբ	ամբողջությամբ
Հարկերի, սուրքերի և պարտադիր վճարների	ամբողջությամբ	ամբողջությամբ
Հումքի	7%	6%
Սարքավորումների	6%	5%
Կոմունալ վճարների	10%	8%
Մենդի	8%	6%

Այն տնտեսավարողները, որոնք իրենց կանոնադրական կապիտալում 2020 թվականին կիրականացնեն 25 մլն դրամ և ավելի գումարի չափով ներդրում, կարող են ողջ ծավալով օգտվել վերը նկարագրված վարկավորման արտոնյալ գործիքակազմից՝ անկախ նախկինում այս որոշմամբ հաստատված միջոցառումից օգտված լինելու հանգամանքից և վարկավորման ծավալից ու պայմաններից:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 2-րդ միջոցառումով⁴ կառավարությունը նպատակ է դրել օժանդակել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող առանձին տնտեսավարողներին՝ կորոնավիրուսի տարածման հետևանքով ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը մեղմելու համար: Նախատեսվում է տնտեսավարողների համար ստեղծել ֆինանսական միջոցների ժամանակավոր հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու և արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար: Միջոցառման շրջանակներում թիրախը գյուղատնտեսության ոլորտն է, շահառուներն են ՀՀ տարածքում գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնողները:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 1-ին միջոցառումը հաստատելու մասին», 26 մարտի 2020 թվական, № 355-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145869>

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 2-րդ միջոցառումը հաստատելու մասին», 26 մարտի 2020 թվական, № 356-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142085>

նացնող ֆիզիկական անձինք, որոնք ունեն վարկային բարվոք պատմություն, և անհատ ձեռնարկատերերը կամ իրավաբանական անձինք, որոնք ունեն վարկային և հարկային (բացառությամբ մինչև 365 օրվա գրանցմամբ գյուղատնտեսական կոտպերատիվների) բարվոք պատմություն, օժանդակության ձևն է նպատակային վարկերի/լիզինգի համաֆինանսավորումը և (կամ) վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 3-րդ միջոցառումը⁵ ենթադրում է օժանդակություն տրամադրել ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող, միջոցառման սահմանված չափանիշներին համապատասխանող տնտեսավարողներին՝ կորոնավիրուսի տարածման հետևանքով ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը մեղմելու նպատակով: Օժանդակության նպատակն է տնտեսավարողների համար ստեղծել ֆինանսական միջոցների ժամանակավոր հասանելիության հնարավորություն՝ արձագանքելու շուկաների փոփոխվող պայմաններին: Միջոցառման շրջանակներում թիրախը ՓՄՁ-ներն են, շահառուներն են ռեզիդենտ տնտեսավարողները, որոնք ունեն վարկային և հարկային բարվոք պատմություն՝ օժանդակության ձևն է վարկերի տրամադրումը:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 17-րդ միջոցառումը⁶ վերաբերում է կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ բարձր տեխնոլոգիաների ոլորտի առանձին տնտեսավարողների մոտ արդյունավետ աշխատատեղերի պահպանման դժվարությունների հաղթահարմանը, ինչպես նաև ոլորտում նորարարական գաղափարների իրագործման և առևտրայնացման խթանմանը: Միջոցառման շրջանակներում թիրախը բարձր տեխնոլոգիաների ոլորտն է, շահառուներն են տնտեսավարողները, որոնք համապատասխանում են «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում նշված չափանիշներին, օժանդակության ձևն է միանվագ դրամաշնորհի տրամադրումը մրցույթի արդյունքներով հաղթող տնտեսավարողներին (տե՛ս աղյուսակ 2):

Հայտերը գնահատվում են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից՝ հաշվի առնելով ներկայացված ծրագրի նորարարությունը, համապատասխանությունը ՀՀ կառավարության ռազմավարական առաջնահերթություններին, իրագործելիությունը, ֆինանսական համապատասխանելիությունը, արտադրանքի իրացվելիությունը միջազգային շուկայում և այլն:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 3-րդ միջոցառումը հաստատելու մասին», 26 մարտի 2020 թվական, № 357-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140968>

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 17-րդ միջոցառումը հաստատելու մասին», 7 մայիսի 2020 թվական, № 714-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142942>

Մրցույթներին մասնակցող տնտեսավարողներին ներկայացվող հիմնական պայմանները⁷

Դրամաշնորհի անվանումը	Դրամաշնորհի առավելագույն արժեքը	Մրցույթի շահառուների պայմանները
Նորարարական դրամաշնորհները	10.0 մլն դրամ	Վերջին 2 տարում ՀՀ-ում գրանցված և պրոդուկտներ ստեղծող տնտեսավարողներ
Կայացած ընկերությունների դրամաշնորհները	20.0 մլն դրամ	2 տարվանից ավելի ՀՀ-ում գրանցված և ծառայություններ մատուցող տեխնոլոգիական ընկերություններ (տնտեսավարողներ), որոնք պատրաստ են մշակել պրոդուկտներ
Համաֆինանսավորման դրամաշնորհները	100 % համաֆինանսավորում, սակայն ոչ ավելի, քան 30.0 մլն դրամ	Տեխնոլոգիական ընկերություններ (տնտեսավարողներ), որոնք կներգրավեն փաստաթղթավորված և հաստատված ներդրումներ

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառումն⁸ ուղղված է ՀՀ քաղաքացիների և առանձին տնտեսավարողների շրջանում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների ազդեցությունը մեղմելուն մրցունակ գործարար ծրագրեր իրագործելու եղանակով: Միջոցառման շրջանակներում թիրախը «գրոյից» բիզնես ստեղծելու մրցունակ ծրագրերի և ձեռնարկատիրական գաղափարների իրագործման, ինչպես նաև նորարարական զարգացման գործարար ծրագրերի խթանման գործընթացներն են, շահառուներն են ՀՀ տարածքում գրանցված կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, օժանդակության ձևն է արտոնյալ վարկավորման նպատակով երաշխիքների տրամադրումը:

Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների 75%-ը հատկացվում է որպես 8 տարվա մարման ժամկետով անտոկոս փոխառություն, իսկ 25%-ը՝ որպես դրամաշնորհ: Միջոցառումն իրականացվում է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջոցով:

Անդրադառնալով **կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերին**, անհրաժեշտ է նշել, որ դրանք, անշուշտ, կարող են ունենալ դրական ներգործություն ՀՀ տնտեսության զարգացման վրա: Խոսքը հատկապես վերը ներկայացված ծրագրերի մասին է, որոնք ընդգրկում են վարկավորման գործընթացները, գյուղատնտեսության ո-

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառումը հաստատելու մասին», 27 մայիսի 2020 թվական, № 854-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142897>

յորտր, ՓՄՁ-ների գործունեությունը, բարձր տեխնոլոգիաների ոլորտը, «գրոյից» բիզնես ստեղծելու մրցունակ ծրագրերի և ձեռնարկատիրական գաղափարների իրագործման, ինչպես նաև նորարարական զարգացման գործարար ծրագրերի խթանման գործընթացները և այլն:

Ակնհայտ է, որ ներդրումային ռեսուրսների անբավարարության պայմաններում տնտեսավարողների համար մատչելի ֆինանսական միջոցների հասանելիության ապահովումը որոշակիորեն կնպաստի նրանց գործունեության բարելավմանը: Մակայն պետք է նկատել, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի շրջանակներում առաջարկվող վարկավորման պայմանները դեռևս ամբողջությամբ չեն համապատասխանում մեր երկրում ձևավորված տնտեսական իրողություններին, և հետևաբար անհրաժեշտ է շարունակել վարկային տոկոսադրույքների նվազեցման նոր մեխանիզմների որոնումը, որոնք հետագայում հնարավորություն կընձեռեն որոշակիորեն մեղմելու հանրապետությունում առկա ներդրումային ռեսուրսների սակավության հիմնախնդիրը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերը կլինեին առավել համակարգված և մատչելի, եթե ՓՄՁ-ների (3-րդ միջոցառում) և միկրոձեռնարկատիրության (10-րդ միջոցառում) աջակցության ծրագրերը միավորվեին և ներկայացվեին մեկ ծրագրով: Արդյունավետ աշխատատեղերի պահպանման աջակցության 5-րդ, 17-րդ և 21-րդ միջոցառումների միավորումը նույնպես նպատակահարմար կլիներ: Նշված ծրագրերում անհրաժեշտ լրացումները և փոփոխությունները հաջողությամբ հնարավոր է կատարել ՀՀ օրենքներում իրականացվող փոփոխություններին համահունչ առանց նոր միջոցառումների մշակման անհրաժեշտության:

Համավարակի տնտեսական հետևանքների հաղթահարման նպատակով չափազանց կարևոր են նաև **ՀՀ կենտրոնական բանկի** կողմից 2020 թ. իրականացված միջոցառումները:

1. Կենտրոնական բանկի խորհուրդը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն 4.25%-ի:

2. Դրամավարկային քաղաքականության հիմնական ռեպո գործիքի միջոցով տրամադրվել է շուկայի աճող պահանջարկին համահունչ դրամային իրացվելիություն:

3. Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացրել հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվը 10%-ից իջեցնել 9%-ի:

4. Կենտրոնական բանկը համապատասխան ազդակներ է փոխանցել բանկերին՝ ձևավորված կապիտալի բուֆերները բանկային գործառնությունների իրականացման շարունակականությունն ապահովելու նպատակով օգտագործելու ուղղությամբ:

5. Կենտրոնական բանկը հետաձգել է «Բազել 3»-ով սահմանված իրացվելիության երկու նոր նորմատիվների՝ իրացվելիության ծած-

կույթի նորմատիվի (LCR) և զուտ կայուն ֆինանսավորման նորմատիվի (NSFR) ներդրման ժամկետը:

6. Երկարաձգվել են ֆինանսական կազմակերպությունների կողմից հաշվետվությունների, այդ թվում՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների, հեռանկարային զարգացման ծրագրերի, վերականգնման ծրագրերի ներկայացման ժամկետները:

7. Կենտրոնական բանկը արել է հայտարարություններ՝ հաճախորդներին ուղղորդելով օգտվել օնլայն ֆինանսական ծառայություններից:

8. Կենտրոնական բանկի «Թեժ գիծը» աշխատել է արտակարգ ռեժիմով:

9. Կենտրոնական բանկը ամենօրյա ռեժիմով հանդիպումներ և քննարկումներ է ունենում ֆինանսական կազմակերպությունների հետ՝ բանկերին անհրաժեշտ ծավալի իրացվելի միջոցներ տրամադրելու կապակցությամբ:

10. Վարկային պարտավորությունները պայմանագրերին համապատասխան կատարելու դժվարություններով պայմանավորված՝ վերանայվել են COVID-19 համավարակից առանձնակի տուժած բիզնեսի և ֆիզիկական անձ վարկառուների պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետները:

11. «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն, «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ն և «Գերմանահայկական հիմնադրամը» բանկերի միջոցով հաճախորդներին տրամադրված վարկերի մայր գումարների մարումները 6 ամսով հետաձգել են:

12. Կենտրոնական բանկը բանկերին ուղղորդել է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- բռնագանձում չտարածել վարկառուների այն հաշիվների նկատմամբ, որոնց միջոցով ՀՀ կառավարության հաստատած միջոցառումների շրջանակներում տրամադրվել են ֆիզիկական անձանց օգնությունները և սոցիալական այլ աջակցություններ,

- միջոցներ ձեռնարկել, որպեսզի սոցիալական աջակցության միջոցներից չգանձվեն միջնորդավճարներ:

Ընդհանուր առմամբ, դիտարկված միջոցառումների իրականացմամբ որոշակիորեն մեղմվել է տնտեսության ճգնաժամային իրավիճակը, ինչի մասին է վկայում 2020 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների կտրվածքով բանկային համակարգի վարկային ներդրումների 6.3%-ով աճը⁹:

Ստորև ներկայացվում են ՀՀ սոցիալ - տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ - օպերատիվ ամփոփմամբ ստացված՝ 2020 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 3):

⁹ Տե՛ս ՀՀ ֆինանսական համակարգը. զարգացումը, ֆինանսական կայունությունը և համավարակով պայմանավորված զարգացումները, ՀՀ ԿԲ, սեպտեմբեր - 2020, <https://www.cba.am/AM/pmessagingannouncements/FinSys%2008.09.2020.pdf>

Աղյուսակ 3

ՀՀ սոցիալ - տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ - օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2020 թ. (2020 թ. սեպտեմբերի 25-ի դրությամբ)¹⁰

N	Անվանումը	հունվար-օգոստոս	հունվար-օգոստոսը 2019թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %
1.	տնտեսական ակտիվության ցուցանիշը (SUՑ), %	x	93.6
1.1	արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն դրամ	1 242 687.9	100.9
1.2	գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը, մլն դրամ ¹¹	479 934.6	102.3
1.3	շինարարության ծավալը, մլն դրամ	179 029.5	80.9
1.4	առևտրի շրջանառությունը, մլն դրամ	1 773 950.3	88.5
1.5	ծառայությունների ծավալը (առանց առևտրի), մլն դրամ	1 114 319.7	89.2
2.	սպառողական գների ինդեքսը, %	x	100.8
3.	արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը, %	x	101.5
4.	էլեկտրաէներգիայի արտադրությունը, մլն.կՎտ.ժ	5 104.8	101.9
5.	միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	187 061	104.7
5.1	պետական, դրամ	165 474	107.0
5.2	ոչ պետական, դրամ	197 468	103.4
6.	արտաքին առևտրաշրջանառությունը, մլն դոլար	4 385.4	89.8
6.1	արտահանում, մլն դոլար	1 567.9	94.0
6.2	ներմուծում, մլն դոլար	2 817.5	87.6
7.	դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ	483.90	X
8.	դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումները, մլն դոլար ¹²	235.6	92.9
8.1	աշխատողների զուտ աշխատավարձ ¹³	76.2	94.2

¹⁰ Տե՛ս ՀՀ սոցիալ - տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ - օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, 2020 թվականի օգոստոս, (2020 թ. սեպտեմբերի 25-ի դրությամբ), Երևան – 2020, <https://www.armstat.am/file/doc/99520288.pdf>

¹¹ Տե՛ս Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը, մլն դրամ (2020, III եռամսյակ) <https://www.armstat.am/am/?nid=12&id=03001>

¹² Տե՛ս Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի (2020 թ. I եռամսյակ), <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

¹³ Զուտ աշխատավարձը/եկամուտը սեզոնային աշխատողների կողմից ստացված աշխատավարձն է/եկամուտն է առանց եկամտահարկի, տրանսպորտային ծախսերի և արտերկրում կատարված այլ ծախսումների:

8.2	աշխատողների աշխատավարձ ¹⁴	98.1	94.1
8.3	որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված գուտ եկամուտներ ¹⁵	15.2	94.4
8.4	որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված եկամուտներ	19.6	94.2
8.5	անձնական տրանսֆերտներ	140.2	94.1
8.6	կապիտալ տրանսֆերտներ	4.0	51.3

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ 2020 թ. հունվար–սեպտեմբեր ամիսներին 2019 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ տնտեսական ակտիվության ցուցանիշը նվազել է 6.4 տոկոսով, շինարարության ծավալը՝ 19.1 տոկոսով, առևտրի շրջանառությունը՝ 11.5 տոկոսով, ծառայությունների ծավալը (առանց առևտրի)՝ 10.8 տոկոսով, արտաքին առևտրաշրջանառությունը՝ 10.2 տոկոսով, արտահանումը՝ 6 տոկոսով, ներմուծումը՝ 12.4 տոկոսով, դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումները՝ 7.1 տոկոսով: Ընդ որում, դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումների կառուցվածքում անձնական տրանսֆերտները նվազել են 5.9 տոկոսով, իսկ կապիտալ տրանսֆերտները՝ 48.7 տոկոսով, ինչը զգալի բացասական ազդեցություն կգործի տնտեսական գործընթացների վրա, և կպահանջի ավելի լուրջ ջանքեր ներդնել ստեղծված իրավիճակը հաղթահարելու համար: Մակայն նկատենք նաև, որ ներկայացված նվազեցումներին զուգահեռ տեղի են ունեցել նաև որոշակի դրական տեղաշարժեր: Մասնավորապես՝ արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է 0.9 տոկոսով, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 2.3 տոկոսով, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 1.9 տոկոսով և միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 4.7 տոկոսով: Հասկանալի է, որ դիտարկված ցուցանիշները դեռ վերջնական չեն և ամբողջությամբ չեն բնութագրում տնտեսության իրական վիճակը, հետևաբար՝ ՀՀ-ում կորոնավիրուսի տնտեսական հետևանքները ճշգրիտ որոշել հնարավոր կլինի միայն հետագա ցուցանիշների համակողմանի ուսումնասիրության հիման վրա: Հիմք ընդունելով դիտարկված ցուցանիշները՝ կարող ենք արձանագրել, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների հաղթահարմանը էապես նպաստելու են բարձր տեխնոլոգիաների և գյուղատնտեսության ոլորտները:

¹⁴ Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված անկլավային տարածքում ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը:

¹⁵ Արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ: Գնահատականը տրված է 2011 թվականից հիմնվելով հարցումների տվյալների վրա:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետության համար ներկայիս պայմաններում կարևոր նշանակություն ունի ոչ միայն սեփական տնտեսության, այլ նաև գործընկեր երկրների, հատկապես ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի Դաշնության տնտեսության վիճակը: Փորձագետների գնահատականների և վերլուծական կանխատեսումների համաձայն՝ 2020 թ. 2019 թ. համեմատ համաշխարհային տնտեսության անկումը կկազմի մոտ 3-5%: Ակնհայտ է, որ համաճարակից հետո համաշխարհային տնտեսության վիճակը էապես կտարբերվի նախորդ տարիներից¹⁶:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս վիճակը՝ առաջարկում ենք կորոնավիրուսի տնտեսական հետևանքների հաղթահարման հետևյալ ուղիները.

- ինովացիոն և ներդրումային գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի ամրապնդումը,
- վարկային ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի մշակումն ու գործարկումը,
- վարկային ներդրումների ապահովագրումը, առանձին խմբերի վարկառուների համար վարկերի վերադարձման պետական երաշխիքների տրամադրումը (համաֆինանսավորումը),
- 3-5 տարվա կտրվածքով հավատարիմ ավանդատու հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց արտոնյալ պայմաններով վարկավորումը,
- բանկերի և ընկերությունների միջև սերտ համագործակցության հաստատումը՝ ընկերությունների կապիտալում մասնակցությունը, համատեղ ներդրումային նախագծերի մշակումը և իրագործումը, խորհրդատվական ծառայությունների տրամադրումը և այլն,
- հիփոթեքային վարկավորման ծավալների ավելացման և շինարարության ոլորտի խթանման նպատակով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում որոշակի փոփոխությունների իրականացումը, մասնավորապես՝ նոր կնքվող հիփոթեքային վարկային պայմանագրերով նախատեսված ֆինանսական վճարումներին պետք է ուղղել նաև նախորդ տարիների եկամտահարկի գումարները, ինչը հնարավորություն կընձեռի ապահովելու հավասար պայմաններ նոր և հին հիփոթեքային վարկառուների համար՝ միաժամանակ նպաստելով քաղաքացիների կենսամակարդակի բարելավմանը,
- կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումը,
- ընկերությունների գործունեության թափանցիկության ապահովումը,
- պետական մակարդակով ՀՀ քաղաքացիների հեռավար աշխատանքի խթանման միջոցով ներքին և արտաքին (արտասահմանյան ընկերություններում) զբաղվածության ապահովումը,

¹⁶ St' u **Медведев Д. А.** Существует угроза деградации мировой экономики из-за коронавируса /Коммерсантъ// [электронный ресурс] - <https://www.kommersant.ru/doc/4319883>

- հեռավար ուսուցման առավելությունների արդյունավետ օգտագործումը,

- գործազուրկ դարձած քաղաքացիների համար աշխատաշուկայում պահանջարկ վայելող մասնագիտությունների գծով վերապատրաստման դասընթացների կազմակերպումը,

- սոցիալական աշխատանքի խթանումը և այլն:

Ամփոփելով անհրաժեշտ է նշել, որ վերը դիտարկված մոտեցումներով առաջնորդվելու և հնարավոր մարտահրավերներին համապատասխան տնտեսական զարգացման ծրագրեր մշակելու և իրագործելու դեպքում հնարավոր է ապահովել Հայաստանի Հանրապետության տնտեսության կայուն և համաչափ զարգացումը: Ակնհայտ է, որ նշված ծրագրերի մշակման և իրագործման կարևորագույն նպատակները պետք է լինեն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, COVID 19-ի և Արցախյան պատերազմի հետևանքների հաղթահարումը:

Բանալի բառեր - տնտեսություն, կառավարում, աջակցության ծրագիր, սոցիալական վիճակ, ֆինանսավորում, խթանում, զարգացում, արդյունավետություն

ВАРДАН БОСТАНДЖЯН, АРМИНЕ ЗАХАРЯН – Проблемы преодоления экономических последствий коронавируса в Республике Армения. – Статья посвящена методам и механизмам, позволяющим преодолеть экономические последствия пандемии коронавируса, и факторам, обуславливающим их эффективное применение. Правительство РА разработало программы устранения экономических и социальных последствий пандемии, имеются также основные макроэкономические показатели, характеризующие социально-экономическое положение в стране. На примере Армении подняты основополагающие вопросы, связанные с доступностью финансовых средств для хозяйствующих субъектов, разработаны некоторые механизмы преодоления экономических последствий коронавируса.

Ключевые слова: экономика, управление, программа содействия, социальное положение, финансирование, стимулирование, развитие, эффективность

VARDAN BOSTANDJYAN, ARMINE ZAKHARYAN – Problems of Overcoming the Economic Consequences of Coronavirus in the Republic of Armenia. – The article studies the methods and mechanisms of overcoming the economic consequences of coronavirus in the Republic of Armenia. It also discusses the factors determining the effective use of these methods and mechanisms, the programs for eliminating the economic and social consequences of coronavirus developed by the Government of the Republic of Armenia, as well as the main macroeconomic indicators characterizing the socio-economic situation in RA. Based on the example of RA, the authors discuss the fundamental issues aimed at ensuring the availability of financial resources for business entities and develop some mechanisms of overcoming the economic consequences of coronavirus.

Key words: economics, management, assistance program, social status, financing, incentives, development, efficiency

Ներկայացվել է՝ 24.10.2020, Գրախոսվել է՝ 11.12.2020, Ընդունվել է տպագրության՝ 25.12.2020